# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2023/16-22-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 68 | Հեքսանիոս Գ+Ռ | Անիոս Լաբորատորիաներ | Անիոս Լաբորատորիաներ | Բաղադրությունը – ՉԱՄ, Գուանիդինի ածանցյալներ՝ 1%, ինչպես նաև գործառնական բաղադրիչներ և այլ հավելյալ նյութեր: Ներկայացվող ապրանքը պարունակում է նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը հաստատված է օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունումչի պարունակում որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր ծավալի պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվում է 0,5%-անոց, 200 լիտր աշխատանքային լուծույթ, որն ապահովում է հակաբակտերիալ՝ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա) ազդեցությունը 15 րոպեում (ինչը հաստատված լինի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվում են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Խտանյութից աշխատանքային լուծույթի պատրաստման համար օգտագործվող ջրի ջերմաստիճանը 15°C-ից 25°C-ը: Աշխատանքային լուծույթի պիտանիությունը 7 օր է, նախատեսված բազմակի օգտագործման համար: Ախտահանիչ նյութի pH - 7,3: Վտանգավորության աստիճանը- 4-րդ, 5-րդ դաս: Մատակարարման պահին խտանյութի պիտանիության ժամկետի 1/2-ի առկայություն Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի հավաստագրի/երի առկայություն: Ունի ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Նոր է, չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2023/16-22-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 68 | | | | |